ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«14» հոկտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-61/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11091-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12077-16 և 07.06.2016թ. թիվ 1/73-1/15888-16 գրություններով ներկայացված «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 25.03.2016թ. թիվ 20/135, «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 15.03.2016թ. թիվ Մ/Պ-

16/41 գրության, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3) 30.05.2016թ. թիվ 40-1011 գրությունների հիման վրա, 01.04.2016թ. թիվ 1/73-3/11091-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12077-16, 07.06.2016թ. թիվ 1/73-1/15888-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. <u>«Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 04.04.2016թ. թիվ 01/04.1/1319-16, 15.04.2016թ. թիվ 01/04.1/1517-16, 22.06.2016թ. թիվ 01/04.1/2421-16 գրություններով դիմել է «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրությունների՝ Ընկերության կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

«Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 09.09.2016թ. ժամը 17:40-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-61/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 25.03.2016թ. թիվ 20/135 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով 09.09.2016թ. ժամը 17:40-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-61/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **«Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ը 15.03.2016թ. թիվ Մ/Պ-16/41 գրությամբ ներկայացրել է «ԳԵՏ-ՇՀԱՊՁԲ-15/11-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատու 2-ը հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հարցմանն ի պատասխան՝ տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները իրականությանը չեն համապատասխանում իրականությանը:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով 09.09.2016թ. ժամը 17:40-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-61/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. **«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 30.05.2016թ. թիվ 40-1011 գրությամբ ներկայացրել է «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁ-15/1-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատու 3-ը վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ 2016թ. երկրորդ եռամսյակի ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին անհրաժեշտ բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ընթացակարգի շրջանակային համաձայնագրերի ցանկից գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների շրջանակային համաձայնագրերի ցանկում գրանցված լինելու փաստը ստուգելիս պարզվել է, որ «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ՝ 19.05.2016թ. գրանցված չի եղել apranq-15-1@shh.gnumner.am էլ. փոստի հասցեով:

6. **<u>ՍՑ-ԳԲԽ-61/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11091-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12077-16 և 07.06.2016թ. թիվ 1/73-1/15888-16 գրություններով ներկայացված «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով ընթացակարգ

- ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) մասնակցելու նպատակով «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն ***04.03.2016թ.*** հայտ է ներկայացրել:
- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***
- Պատվիրատու 1-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 19.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 22.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա (04.03.2016թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 212 ՀՀ դրամի չափով:***

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 25.03.2016թ. ժամը 17:15-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշել է «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի հայտը մերժել:

2. «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԵՏ-ՇՀԱՊՁԲ-15/11-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ.

- «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԳԵՏ-ՇՀԱՊՁԲ-15/11-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) մասնակցելու նպատակով «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն ***04.03.2016թ.*** հայտ է ներկայացրել:
- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացվելու օրվա (04.03.2016թ.)դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:***
- Պատվիրատու 2-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 04.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 2-ին 11.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա (04.03.2016թ.) դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն 212 ՀՀ դրամի չափով:***
- Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 18.03.2016թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի հայտը մերժել:

3. Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁ-15/1-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ.

- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁ-15/1-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3) մասնակցելու նպատակով «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն 19.05.2016թ. հայտ է ներկայացրել:
- Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովը 19.05.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ պատճառաբանելով, որ «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն գրանցված չէ շրջանակային համաձայնագրերով apranq-15/1@shh.gnumner.am էլեկտրոնային հասցեում:

7. <u>ՍՑ-ԳԲԽ-61/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության 25.03.2016թ. թիվ 20/135 գրությունը, «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի 15.03.2016թ. թիվ Մ/Պ-16/41, «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի 15.03.2016թ. թիվ Մ/Պ-16/41 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 30.05.2016թ. թիվ 40-1011 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից

ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ն ***04.03.2016թ.*** մասնակցության հայտեր է ներկայացրել՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով և «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԵՏ-ՇՀԱՊՁԲ-15/11-16/4» ծածկագրով ընթացակարգերին:

Ընկերությունը Ընթացակարգերի մասնակցության հայտերի N 2 հավելվածով՝ ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***հայտերը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.03.2016թ. և 22.03.2016թ. տրամադրված եզրակացությունների համաձայն՝ Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրվա (04.03.2016թ.) դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ***:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում</u> գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ**:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով

սահմանված և ***Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնը արձանագրում է, որ «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, մասնավորապես Ընկերությունը 04.03.2016թ. ժամը 02:33-ին մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԱՊՁԲ-16/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11» ծածկագրով ընթացակարգին, որի շրջանակներում ներկայացրել է կեղծ տվյալ, և 04.03.2016թ. ժամը 11:52-ին կրկին մասնակցության հայտ է ներկայացրել «Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԵՏ-ՇՀԱՊՁԲ-15/11-16/4» ծածկագրով ընթացակարգին, որի շրջանակներում նույնպես թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Ինչ վերաբերում է «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ի կողմից շրջանակային համաձայնագրերով apranq-15/1@shh.gnumner.am էլեկտրոնային հասցեում գրանցված չլինելու պայմաններում «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁ-15/1-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ ներկայացնելու հանգամանքին, ապա անհրաժեշտ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սպառիչ թվարկում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նշված հիմքերի շարքում նախատեսված չէ մասնակցի՝ շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների ցուցակում ներառված չլինելը:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, ***եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:***

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2016թ. թիվ 1/73-3/11091-16, 14.04.2016թ. թիվ 1/73-3/12077-16 և 07.06.2016թ. թիվ 1/73-1/15888-16 գրություններով ներկայացված «Վարդան Կիրակոսյան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00868168) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-61/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան